

**«ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ՝ ԱՌԵՎՏՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ
ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ ՓՈՓՈԽՈՂ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

Առեւտրի համաշխարհային կազմակերպության անդամները,

հաշվի առնելով WT/L/641 փաստաթղթում նշված՝ Գլխավոր խորհրդի որոշումը, որն ընդունվել է Առեւտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման Մարաքեշի համաձայնագրի (ԱՀԿ համաձայնագիր) X հոդվածի 1-ին կետի համաձայն,

սույնով համաձայնեցին հետեւյալի մասին.

1. 4-րդ պարբերության համաձայն արձանագրությունն ուժի մեջ մտնելու պահից «Մտավոր սեփականության իրավունքների՝ առեւտրին առնչվող հայեցակետերի մասին» ԱՀԿ համաձայնագիրը (ԹՐԻՓՍ համաձայնագիր) փոփոխվում է սույն արձանագրության հավելվածում սահմանված կարգով՝ 31-րդ հոդվածից հետո ավելացնելով 31bis հոդվածը եւ 73-րդ հոդվածից հետո ավելացնելով ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելվածը:

2. Սույն արձանագրության որեւէ դրույթի առնչությամբ չեն կարող կատարվել վերապահումներ՝ առանց մյուս Անդամների համաձայնության:

3. Սույն արձանագրությունը բաց է Անդամների կողմից ընդունման համար մինչեւ 2007 թվականի դեկտեմբերի 1-ը կամ այնպիսի ավելի ուշ ամսաթվի, որը կարող է որոշվել Նախարարական համաժողովի կողմից:

4. Սույն արձանագրությունն ուժի մեջ է մտնում ԱՀԿ համաձայնագրի X հոդվածի 3-րդ կետին համապատասխան:

5. Սույն արձանագրությունն ի պահ է հանձնվում Առեւտրի համաշխարհային կազմակերպության Գլխավոր տնօրենին, որը դրա վավերացված պատճենը եւ 3-րդ պարբերության համաձայն դրա յուրաքանչյուր ընդունման մասին ծանուցումն անհապաղ ներկայացնում է յուրաքանչյուր Անդամի:

6. Սույն արձանագրությունը գրանցվում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրության 102-րդ հոդվածի դրույթներին համապատասխան:

Կատարված է Ժնևում երկու հազար հինգ թվականի դեկտեմբերի վեցին, մեկ օրինակից՝ անգլերեն, ֆրանսերեն եւ իսպաներեն, ընդ որում, բոլոր տեքստերը հավասարազոր են:

1. «ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ՝ ԱՌԵՎՏՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 31BIS ՀՈԴՎԱԾ.....1

1.1. 31bis հոդվածի տեքստը1

1.2. «Մտավոր սեփականության իրավունքների՝ առեստրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագրի (ԹՐԻՓՍ համաձայնագիր) հավելվածի տեքստը.....3

1.3. ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելվածի առդիրի տեքստը8

1.4. Ընդհանուր դրույթներ9

1. «ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ՝ ԱՌԵՎՏՐԻՆ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՅԵՑԱԿԵՏԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ 31BIS ՀՈԴՎԱԾ

1.1. 31bis հոդվածի տեքստը

Հոդված 31bis

1. Արտահանող անդամի՝ 31-րդ հոդվածի «գ» պարբերությամբ սահմանված պարտավորությունները չեն կիրառվում այն դեպքերում դրա կողմից պարտադիր լիցենզիայի տրամադրման նկատմամբ, երբ դա անհրաժեշտ է դեղագործական արտադրանքի արտադրության եւ իրավասու Ներմուծող անդամի (անդամների) տարածք դրա արտահանման համար՝ սույն համաձայնագրի հավելվածի 2-րդ պարբերությամբ սահմանված պայմաններին համապատասխան:

2. Եթե պարտադիր լիցենզիան տրամադրվում է Արտահանող անդամի կողմից սույն հոդվածով եւ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված կարգով, ապա 31-րդ հոդվածի «ը» պարբերության համաձայն՝ համապատասխան վճար է կատարվում այդ Անդամի տարածքում՝ հաշվի առնելով Արտահանող անդամի տարածքում թույլատրված օգտագործման տնտեսական արժեքը

Ներմուծող անդամի համար: Եթե իրավասու Ներմուծող անդամի տարածքում նույն արտադրանքի համար տրամադրվել է պարտադիր լիցենզիա, ապա այդ անդամի՝ 31-րդ հոդվածի «ը» պարբերությունով սահմանված պարտավորությունը չի կիրառվում այն արտադրանքի նկատմամբ, որի համար Արտահանող անդամի տարածքում կատարվում է վճար՝ սույն պարբերության առաջին նախադասությանը համապատասխան:

3. Դեղագործական արտադրանքի նկատմամբ գնողունակության մակարդակը բարձրացնելու եւ դրա տեղական արտադրությունը խթանելու նպատակով մասշտաբի էֆեկտն օգտագործելու համար. եթե ԱՀԿ անդամ զարգացող կամ առավել թույլ զարգացած երկիրը տարածաշրջանային առևտրային համաձայնագրի կողմ է ՍԱԳՀ 1994-ի XXIV հոդվածի եւ «Զարգացող երկրների տարբերակված եւ ավելի բարենպաստ մոտեցման, փոխադարձության եւ ավելի լիարժեք մասնակցության վերաբերյալ» 1979 թվականի նոյեմբերի 28-ի (L/4903) որոշման իմաստով, որի ներկայիս անդամների առնվազն կեսը կազմում են ՄԱԿ-ի առավել թույլ զարգացած երկրների ցանկում ներկայումս ընդգրկված երկրները, ապա այդ անդամի՝ 31-րդ հոդվածի «զ» պարբերությամբ սահմանված պարտավորությունը չի կիրառվում այն դեպքերում, երբ անհրաժեշտ է ապահովել պարտադիր լիցենզիայով այդ անդամի տարածքում արտադրված կամ այդ տարածք ներմուծված դեղագործական արտադրանքի արտահանումը տարածաշրջանային առևտրային համաձայնագրի կողմ հանդիսացող մյուս զարգացող կամ առավել թույլ զարգացած երկրներ, որտեղ առկա է տվյալ առողջական խնդիրը: Պարզ է, որ վերոնշյալը չի հակասում տվյալ արտոնագրային իրավունքների տարածքային բնույթին:

4. Անդամները չեն վիճարկում սույն հոդվածի եւ սույն համաձայնագրի հավելվածի դրույթներին համապատասխան ձեռնարկված միջոցները՝ ՍԱԳՀ 1994-ի XXIII հոդվածի 1-ին պարբերության «բ» եւ «գ» ենթապարբերություններին համապատասխան:

5. Սույն հոդվածով եւ սույն համաձայնագրի հավելվածով չեն

ԹՐԻՓՍ համաձայնագիր. Հոդված 31bis (Գործելակարգը)

սահմանափակվում այն իրավունքները, պարտավորությունները եւ հնարավորությունները, որոնք անդամներն ունեն սույն համաձայնագրի 31-րդ հոդվածի «զ» եւ «է» պարբերություններից բացի այլ դրույթների համաձայն, ներառյալ՝ «ԹՐԻՓՍ համաձայնագրի եւ հանրային առողջապահության մասին» (WT/MIN(01)/DEC/2) հռչակագրով վերահաստատված իրավունքները, պարտավորությունները եւ հնարավորությունները, ինչպես նաեւ դրանց մեկնաբանության շրջանակը: Դրանք նաեւ չեն սահմանափակում այն դեպքերը, երբ պարտադիր լիցենզիայով արտադրված դեղագործական արտադրանքը կարող է արտահանվել 31-րդ հոդվածի «զ» պարբերության դրույթների համաձայն:

1.2. «Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագրի (ԹՐԻՓՍ համաձայնագիր) հավելվածի տեքստը

ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելված

1. 31bis հոդվածի եւ սույն հավելվածի նպատակով՝

ա) «դեղագործական արտադրանք» նշանակում է դեղագործության ոլորտի արտոնագրված արտադրանք կամ արտոնագրված գործընթացով արտադրված արտադրանք, որն անհրաժեշտ է «ԹՐԻՓՍ համաձայնագրի եւ հանրային առողջապահության մասին» (WT/MIN(01)/DEC/2) հռչակագրով ճանաչված առողջապահական խնդիրները լուծելու համար: Պարզ է, որ այն ներառում է դրա արտադրության համար անհրաժեշտ ակտիվ բաղադրիչները եւ դրա օգտագործման համար անհրաժեշտ ախտորոշման գործիքների հավաքածուները¹.

(*բնագրի ծանոթագրություն*)¹ Սույն ենթապարբերությունը չի հակասում 1-ին պարբերության «բ» ենթապարբերությանը.

բ) «իրավասու Ներմուծող անդամ» նշանակում է ցանկացած առավել թույլ զարգացած անդամ երկիր եւ ցանկացած այլ անդամ, որը ԹՐԻՓՍ-ի հարցերով խորհուրդ է ներկայացրել ծանուցում², որպես ներմուծող 31bis հոդվածում եւ սույն

հավելվածում սահմանված համակարգը (համակարգ) օգտագործելու իր մտադրության մասին, որից կարելի է ենթադրել, որ անդամը կարող է ցանկացած պահի ծանուցել, որ համակարգն օգտագործելու է ամբողջությամբ կամ սահմանափակ ծավալով, օրինակ՝ միայն երկրում արտակարգ իրավիճակ ստեղծվելու դեպքում կամ խիստ հրատապության այլ հանգամանքներում կամ ոչ առևտրային նպատակներով հանրային օգտագործման դեպքում: Հարկ է նշել, որ որոշ անդամներ չեն օգտագործելու համակարգը որպես Ներմուծող անդամներ³, եւ որ որոշ այլ անդամներ նշել են, որ եթե օգտագործեն համակարգը, ապա միայն երկրում արտակարգ իրավիճակ ստեղծվելու կամ խիստ հրատապության այլ հանգամանքներ առաջանալու դեպքում:

(*քննարկի ծանոթագրություն*)² Պարզ է, որ համակարգն օգտագործելու համար այս ծանուցման՝ ԱՀԿ մարմնի կողմից հաստատման անհրաժեշտություն չկա:

(*քննարկի ծանոթագրություն*)³ Ավստրալիա, Կանադա, Եվրոպական համայնքներ՝ դրա անդամ պետությունների հետ համատեղ՝ 31bis հոդվածի եւ սույն հավելվածի նպատակներով, Իսլանդիա, Ճապոնիա, Նոր Զելանդիա, Նորվեգիա, Շվեյցարիա եւ Ամերիկայի Միացյալ Նահանգներ:

գ) «Արտահանող անդամ» նշանակում է անդամ, որն օգտագործում է համակարգը՝ իրավասու Ներմուծող անդամի համար դեղագործական արտադրանք արտադրելու եւ այդ անդամի տարածք դրանք արտահանելու նպատակով:

2. 31bis հոդվածի 1-ին պարբերության մեջ նշված պայմաններն են՝

ա) իրավասու Ներմուծող անդամը (անդամները)⁴ ԹՐԻՓՍ-ի հարցերով խորհուրդ ուղարկել է ծանուցում²,

(*քննարկի ծանոթագրություն*)⁴ Միասնական ծանուցումները, որոնցում ներկայացվում են սույն ենթապարբերությամբ պահանջվող տեղեկությունները, կարող են ուղարկվել 31bis հոդվածի 3-րդ պարբերության մեջ նշված տարածաշրջանային կազմակերպությունների կողմից՝ դրանց կողմ հանդիսացող եւ համակարգն օգտագործող իրավասու Ներմուծող անդամների անունից՝ այդ կողմերի համաձայնությամբ:

ԹՐԻՓՍ համաձայնագիր. Հոդված 31bis (Գործելակարգը)

(*բնագրի ծանոթագրություն*)² Պարզ է, որ համակարգն օգտագործելու համար այս ծանուցման՝ ԱՀԿ մարմնի կողմից հաստատման անհրաժեշտություն չկա.

i) որում նշվում են անհրաժեշտ արտադրանքի անվանումները եւ ակնկալվող քանակը⁵.

(*բնագրի ծանոթագրություն*)⁵ ԱՀԿ-ի քարտուղարությունը ծանուցումը հրապարակում է ԱՀԿ-ի կայքի՝ համակարգի համար նախատեսված էջում.

ii) որով հաստատվում է, որ տվյալ իրավասու Ներմուծող անդամը, որն առավել թույլ զարգացած անդամ երկրից բացի այլ երկիր է, սույն հավելվածի առդիրում սահմանված եղանակներից որեւէ մեկով սահմանել է, որ դեղագործական ոլորտում չունի բավարար կամ որեւէ արտադրական կարողություններ տվյալ արտադրանքի համար, եւ

iii) որով հաստատվում է, որ եթե դեղագործական արտադրանքն արտոնագրված է իր տարածքում, ապա այն տրամադրել է կամ նախատեսում է տրամադրել պարտադիր լիցենզիա՝ սույն համաձայնագրի 31-րդ եւ 31bis հոդվածներին եւ սույն հավելվածի դրույթներին համապատասխան⁶.

(*բնագրի ծանոթագրություն*)⁶ Սույն ենթապարբերությունը չի հակասում սույն համաձայնագրի 66.1 հոդվածին.

բ) համակարգի շրջանակներում Արտահանող անդամի կողմից տրամադրված լիցենզիան բովանդակում է հետեւյալ պայմանները.

i) լիցենզիայի շրջանակներում կարող է արտադրվել միայն իրավասու Ներմուծող անդամի կարիքների բավարարման համար անհրաժեշտ քանակը, եւ այդ ամբողջ արտադրանքն արտահանվում է այն անդամի (անդամների) տարածք, որն իր կարիքների վերաբերյալ ծանուցում է ուղարկել ԹՐԻՓՍ-ի հարցերով խորհուրդ.

ii) լիցենզիայի շրջանակներում արտադրված արտադրանքի դեպքում հատուկ պիտակի կամ մականշվածքի միջոցով հստակ արտացոլվում է այն հանգամանքը, որ արտադրվել է համակարգի շրջանակներում: Մատակարարները

պետք է այդ արտադրանքը տարբերակեն հատուկ փաթեթվածքի եւ (կամ) հենց արտադրանքի հատուկ գունավորման/ձեւի օգտագործմամբ՝ պայմանով, որ այդ տարբերակումն իրատեսական է եւ էապես չի ազդում գնի վրա. եւ

iii) մինչեւ առաքումը սկսելը լիցենզավորված անձը կայքում⁷ տեղադրում է հետեւյալ տեղեկությունները

(*բնագրի ծանոթագրություն*)⁷ Լիցենզավորված անձը կարող է այդ նպատակով օգտագործել իր կայքը կամ ԱՀԿ-ի քարտուղարության աջակցությամբ՝ ԱՀԿ-ի կայքի՝ այդ համակարգի համար նախատեսված էջը.

- վերելում՝ «i» պարբերության մեջ նշված յուրաքանչյուր նշանակման վայր մատակարարվող քանակը. եւ

- վերելում՝ «ii» պարբերության մեջ նշված արտադրանքի տարբերակիչ հատկանիշները.

գ) Արտահանող անդամը ԹՐԻՓՍ-ի հարցերով խորհրդին ծանուցում է լիցենզիայի տրամադրման, այդ թվում՝ դրան կցված պայմանների մասին⁹: Տրամադրվող տեղեկությունները ներառում են լիցենզավորված անձի անունը եւ հասցեն, արտադրանքը, որի համար տրամադրվել է լիցենզիան, քանակը, որի համար այն տրամադրվել է, երկիրը (երկրները), որտեղ պետք է մատակարարվի արտադրանքը, եւ լիցենզիայի գործողության ժամկետը: Ծանուցման մեջ նաեւ նշվում է վերելում՝ «բ» ենթապարբերության «iii» պարբերության մեջ նշված կայքի հասցեն:

(*բնագրի ծանոթագրություն*)⁹ Պարզ է, որ համակարգն օգտագործելու համար այս ծանուցման՝ ԱՀԿ մարմնի կողմից հաստատման անհրաժեշտություն չկա.

(*բնագրի ծանոթագրություն*)⁹ ԱՀԿ-ի քարտուղարությունը ծանուցումը հրապարակում է ԱՀԿ-ի կայքի՝ համակարգի համար նախատեսված էջում:

3. Համակարգի շրջանակներում ներմուծվող արտադրանքի՝ դրա ներմուծման հիմքում ընկած հանրային առողջապահության նպատակներով օգտագործումն ապահովելու համար իրավասու Ներմուծող անդամներն իրենց

հնարավորության սահմաններում, իրենց վարչական կարողություններին եւ առեստրի շեղման ռիսկին համաչափորեն ձեռնարկում են ողջամիտ միջոցներ այն արտադրանքի վերաարտահանումը կանխելու համար, որը համակարգի շրջանակներում փաստացի ներմուծվել է իրենց տարածք: Այն դեպքում, երբ իրավասու Ներմուծող անդամը, որը զարգացող անդամ երկիր է կամ թույլ զարգացած անդամ երկիր է, բախվում է դժվարությունների՝ կապված սույն դրույթի կիրարկման հետ, զարգացած անդամ երկրներն ըստ պահանջի եւ փոխհամաձայնեցված ժամկետներում եւ պայմաններով իրականացնում են տեխնիկական եւ ֆինանսական համագործակցություն՝ այդ կիրարկումն ապահովելու համար:

4. Անդամներն ապահովում են իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների հասանելիությունն այն արտադրանքի՝ իրենց տարածք ներմուծումը կամ իրենց տարածքում վաճառքը կանխելու համար, որոնք արտադրվել են համակարգի շրջանակներում եւ ուղարկվել են իրենց շուկա սույն դրույթների խախտմամբ՝ օգտագործելով այն միջոցները, որոնք սույն համաձայնագրով պահանջվում է, որ արդեն իսկ հասանելի լինեն: Եթե որեւէ անդամ համարում է, որ այդ միջոցները բավարար չեն այդ նպատակն իրագործելու համար, ապա հարցը կարող է այդ անդամի պահանջով դիտարկվել ԹՐԻՓՍ-ի հարցերով խորհրդում:

5. Դեղագործական արտադրանքի նկատմամբ գնողունակության մակարդակը բարձրացնելու եւ դրա տեղական արտադրությունն ապահովելու նպատակով մասշտաբի էֆեկտն օգտագործելու համար ընդունվում է, որ պետք է խրախուսել 31bis հոդվածի 3-րդ պարբերության մեջ ներկայացված՝ անդամների տարածքում կիրառվող տարածաշրջանային արտոնագրերի տրամադրում նախատեսող համակարգերի մշակումը: Այս նպատակով զարգացած անդամ երկրները պարտավորվում են տեխնիկական համագործակցություն իրականացնել սույն համաձայնագրի 67-րդ հոդվածին համապատասխան, այդ թվում՝ այլ համապատասխան միջկառավարական կազմակերպությունների հետ համատեղ:

6. Անդամներն ընդունում են, որ ցանկալի է խրախուսել դեղագործական

ոլորտում տեխնոլոգիաների փոխանցումը եւ կարողությունների զարգացումն այն խնդիրը վերացնելու համար, որին բախվում են դեղագործության ոլորտում ոչ բավարար կամ բացարձակապես որեւէ կարողություն չունեցող անդամները: Այս նպատակով իրավասու Ներմուծող անդամներին եւ Արտահանող անդամներին խրախուսվում է համակարգն օգտագործել այնպես, որ ապահովվի այս նպատակի իրագործումը: Անդամները պարտավորվում են համագործակցել սույն համաձայնագրի 66.2 հոդվածով, «ԹՐԻՓՍ համաձայնագրի եւ հանրային առողջապահության մասին» հռչակագրի 7-րդ պարբերությամբ ամրագրված առաջադրանքը կատարելիս, ինչպես նաեւ ԹՐԻՓՍ-ի հարցերով խորհրդի ցանկացած այլ վերաբերելի առաջադրանք կատարելիս դեղագործության ոլորտում տեխնոլոգիաների փոխանցմանը եւ կարողությունների զարգացմանը հատուկ ուշադրություն դարձնելու հարցում:

7. ԹՐԻՓՍ-ի հարցերով խորհուրդը յուրաքանչյուր տարի գնահատում է համակարգի աշխատանքը՝ դրա արդյունավետ աշխատանքն ապահովելու համար, եւ դրա աշխատանքի մասին հաշվետվություն է ներկայացնում Գլխավոր խորհուրդ:

1.3. ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելվածի առդիրի տեքստը

ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելվածի առդիր

Դեղագործության ոլորտում արտադրական կարողությունների գնահատումը

Համարվում է, որ առավել թույլ զարգացած անդամ երկրները դեղագործության ոլորտում ունեն ոչ բավարար արտադրական կարողություններ կամ բացարձակապես չունեն այդպիսի կարողություններ:

Մյուս իրավասու Ներմուծող անդամների դեպքում տվյալ արտադրանքի համար արտադրական կարողությունների անբավարար լինելը կամ դրանց բացակայությունը կարող է սահմանվել հետեւյալ եղանակներից որեւէ մեկով.

- i) տվյալ անդամը սահմանել է, որ դեղագործության ոլորտում

բացարձակապես չունի որեւէ արտադրական կարողություն.

կամ

ii) եթե անդամն այդ ոլորտում ունի որոշակի արտադրական կարողություն, ապա այն ուսումնասիրել է այդ կարողությունը եւ պարզել է, որ բացի արտոնագրատիրոջը պատկանող կամ նրա կողմից վերահսկվող կարողությունից՝ այն ներկայումս բավարար չէ իր կարիքները բավարարելու համար: Երբ սահմանվում է, որ այդ կարողությունը դարձել է բավարար անդամի կարիքները բավարարելու համար, համակարգն այլեւս չի կիրառվում:

1.4. Ընդհանուր դրույթներ

1. 2001 թվականի նոյեմբերի 14-ին ընդունված «ԹՐԻՓՍ համաձայնագրի եւ հանրային առողջապահության մասին» Դոհայի հռչակագրի 6-րդ պարբերության համաձայն՝ Նախարարներն ընդունել են հետեւյալը

«ԱՀԿ-ի՝ դեղագործության ոլորտում ոչ բավարար արտադրական կարողություններ ունեցող կամ այդպիսի կարողություններ բացարձակապես չունեցող անդամները կարող են բախվել դժվարությունների՝ կապված ԹՐԻՓՍ համաձայնագրով սահմանված պարտադիր լիցենզավորման գործընթացի արդյունավետ օգտագործման հետ: Մենք հանձնարարել ենք ԹՐԻՓՍ-ի հարցերով խորհրդին արագ լուծել այս խնդիրը եւ հաշվետվություն ներկայացնել Գլխավոր խորհուրդ մինչեւ 2002 թվականի ավարտը»¹ :

2. Հաջորդիվ Գլխավոր խորհուրդը 2003 թվականի օգոստոսի 30-ին ընդունել է ««ԹՐԻՓՍ համաձայնագրի եւ հանրային առողջապահության մասին» Դոհայի հռչակագրի 6-րդ պարբերության կիրարկման մասին» որոշում (2003 թվականի որոշում): Դրանով տրամադրվում էր դեղագործական

¹ WT/MIN(01)/DEC/2:

արտադրանքի առնչությամբ ԹՐԻՓՍ համաձայնագրի 31-րդ հոդվածի «զ» եւ «է» պարբերություններում նշված պարտավորություններից ժամանակավոր ազատում²:

3. 2005 թվականի դեկտեմբերի 6-ին Գլխավոր խորհուրդն ընդունել է «ԹՐԻՓՍ համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» որոշում, որին կցվել է ԹՐԻՓՍ համաձայնագիրը փոփոխող արձանագրությունը³: Նպատակն է եղել ԹՐԻՓՍ համաձայնագրի 31-րդ հոդվածի «զ» եւ «է» պարբերություններով սահմանված պարտավորություններից ազատումը դարձնել ԹՐԻՓՍ համաձայնագրի բաղկացուցիչ մասը:

4. Համաձայն «Առեւտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման Մարաքեշի համաձայնագրի» (ԱՀԿ-ի մասին համաձայնագիր) X:3 հոդվածի՝ Արձանագրությունն ուժի մեջ է մտել 2017 թվականի հունվարի 23-ին՝ ԱՀԿ-ի անդամների երկու երրորդի ընդունմամբ⁴: Այսպիսով, ԹՐԻՓՍ համաձայնագիրը փոփոխվել է Արձանագրության հավելվածում սահմանված կարգով՝ 31-րդ հոդվածից հետո ավելացնելով 31bis հոդվածը եւ 73-րդ հոդվածից հետո ավելացնելով ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելվածը եւ ԹՐԻՓՍ համաձայնագրի առդիրը: 31bis հոդվածով, հավելվածով եւ առդիրով փոփոխություն է կատարվում ԹՐԻՓՍ համաձայնագրի 31-րդ հոդվածի «զ» եւ «ը» պարբերություններում այն անդամների համար, որոնք ընդունել են ԹՐԻՓՍ համաձայնագրի փոփոխությունը⁵:

5. Համաձայն ԱՀԿ-ի մասին համաձայնագրի X:3 հոդվածի՝ յուրաքանչյուր

² WT/L/540 եւ Corr.1: Գլխավոր խորհուրդը պարտավորություններից ազատման մասին այս որոշումն ընդունել է Նախագահի կողմից հրապարակված հայտարարության համատեքստում, որը ներկայացված է Գլխավոր խորհրդի նիստի WT/GC/M/82 արձանագրության 29-31-րդ պարբերություններում:

³ WT/L/641: Գլխավոր խորհուրդն այս որոշումն ընդունել է Նախագահի կողմից հրապարակված հայտարարության համատեքստում, որը ներկայացված է Գլխավոր խորհրդի նիստի WT/GC/M/100 արձանագրության 29-31-րդ պարբերություններում: Մինչեւ որոշումն ընդունվելը առաջարկվող փոփոխության մեջ Նախագահը նաեւ առաջարկություն է ներկայացրել 31bis հոդվածի 4-րդ պարբերության վերաբերյալ: Այս առաջարկությունն արձանագրվել է Գլխավոր խորհրդի նիստի WT/GC/M/100 արձանագրության 28-րդ պարբերության մեջ:

⁴ WT/Let/1236:

⁵ 2005 թվականի դեկտեմբերի 6-ին Արձանագրության ընդունումից ի վեր այն ընդունող անդամների պարբերաբար թարմացվող ցանկը հասանելի է առցանց՝ հետեւյալ հղումով.
http://www.wto.org/en/lish/tratop_e/trips_e/amendment_e.htm:

այլ անդամի համար, որն ընդունում է Արձանագրությունն այն ուժի մեջ մտնելուց հետո, Արձանագրությունն ուժի մեջ է մտնում այդ անդամի կողմից ընդունվելու պահից: Միաժամանակ Գլխավոր խորհրդի 2003 թվական թվականի օգոստոսի 30-ի որոշմամբ սահմանված պարտավորություններից ազատումը շարունակում է կիրառվել այդ անդամների նկատմամբ:

6. Արձանագրության ընդունման սկզբնական վերջնաժամկետը եղել է 2007 թվականի դեկտեմբերի 1-ը: 2019 թվականի դեկտեմբերի 10-ին Գլխավոր խորհուրդը հաստատել է ԹՐԻՓՍ համաձայնագիրը փոփոխող արձանագրությունն անդամների կողմից ընդունվելու ժամկետի 7-րդ երկարաձգումը: Այդ երկարաձգման համաձայն՝ տվյալ անդամներն Արձանագրությունը պետք է ընդունեն մինչև 2021 թվականի դեկտեմբերի 31-ը⁶:

7. ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելվածի 7-րդ պարբերությամբ, որը փոփոխվել է ԹՐԻՓՍ համաձայնագիրը փոփոխող արձանագրությամբ, եւ 2003 թվականի օգոստոսի 30-ի որոշման 8-րդ պարբերությամբ համապատասխանաբար նախատեսվում է, որ «Մտավոր սեփականության իրավունքների՝ առեստրին առնչվող հայեցակետերի մասին» համաձայնագրի հարցերով խորհուրդը (ԹՐԻՓՍ-ի հարցերով խորհուրդ) յուրաքանչյուր տարի գնահատում է փոփոխված ԹՐԻՓՍ համաձայնագրի 31bis հոդվածով եւ 2003 թվականի որոշմամբ ստեղծված պարտադիր լիցենզավորման հատուկ համակարգի աշխատանքը՝ դրա արդյունավետ աշխատանքն ապահովելու համար: Խորհուրդը յուրաքանչյուր տարի դրա աշխատանքի վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Գլխավոր խորհուրդ⁷:

⁶ [WT/L/1081](#): Գլխավոր խորհրդի՝ ընդունման ժամկետը երկարաձգելու վերաբերյալ ավելի վաղ կայացված որոշումները կարելի է գտնել հետևյալ փաստաթղթերում՝ [WT/L/711](#), [WT/L/785](#), [WT/L/829](#), [WT/L/899](#), [WT/L/965](#) եւ [WT/L/1024](#):

⁷ ԹՐԻՓՍ-ի հարցերով խորհրդի պարտադիր լիցենզավորման հատուկ համակարգի տարեկան գնահատման 2021 թվականի հաշվետվության համար տե՛ս [IP/C/92 փաստաթուղթ](#): Ավելի վաղ ներկայացված հաշվետվությունները կարելի է գտնել հետևյալ փաստաթղթերում՝ [IP/C/87](#), [IP/C/86](#) եւ [Corr. 1](#) , [IP/C/84](#), [IP/C/82](#), [IP/C/79](#), [IP/C/76](#), [IP/C/72](#), [IP/C/69](#), [IP/C/66](#), [IP/C/63](#), [IP/C/61](#), [IP/C/57](#), [IP/C/53](#), [IP/C/49](#), [IP/C/46](#), [IP/C/42](#), [IP/C/37](#) եւ [IP/C/33](#):

8. ԹՐԻՓՍ համաձայնագրի 31bis հոդվածով ստեղծված պարտադիր լիցենզավորման հատուկ մեխանիզմն օգտագործելու համար թե՛ Ներմուծող եւ թե՛ Արտահանող անդամից (անդամներից) պահանջվում է ծանուցում ուղարկել ԹՐԻՓՍ-ի հարցերով խորհուրդ՝ ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելվածի 2-րդ պարբերության «ա» եւ «գ» ենթապարբերություններին համապատասխան⁸: Անդամները կարող են 31bis հոդվածով սահմանված ծանուցումները ներկայացնելու համար օգտագործել «e-TRIPS Submission System» համակարգը եւ «e-TRIPS Gateway» պորտալը՝ անդամների կողմից ներկայացված ծանուցումներին մատչելու համար⁹: Ինչպես պարզաբանվել է ԹՐԻՓՍ համաձայնագրի հավելվածի 2-րդ եւ 8-րդ ծանոթագրություններում, այս ծանուցումների՝ ԱՀԿ մարմնի կողմից հաստատման անհրաժեշտություն չկա:

9. Դեղագործության ոլորտում արտադրական եւ արտահանման կարողություններ ունեցող շատ անդամներ իրենց ներպետական կամ տարածաշրջանային օրենսդրության մեջ ավելացրել են ԹՐԻՓՍ համաձայնագրի 31bis հոդվածով թույլատրված բացառությունները¹⁰:

Թարմացվել է 2022 թվականի հուլիսին

⁸ Իրավասու Ներմուծող անդամների կողմից ուղարկված ծանուցումները կարելի է գտնել « IP/N/9/*» շարքի փաստաթղթում: Արտահանող անդամների կողմից ուղարկված ծանուցումները շրջանառվում են «IP/N/10/*» շարքի փաստաթղթերում:

⁹ «e-TRIPS Submission System» համակարգը եւ «e-TRIPS Gateway» պորտալը հասանելի են հետեւյալ հղումով՝ https://www.wto.org/english/tratop_e/trips_e/etrrips_e.htm:

¹⁰ Կիրարկման միջոցների պարբերաբար թարմացվող ցանկը, որոնց մասին ԱՀԿ անդամները ծանուցել են ԹՐԻՓՍ-ի հարցերով խորհրդին, հասանելի է հետեւյալ հղումով՝ https://www.wto.org/english/tratoD_e/trips_e/par6laws_e.htm:

Սույնով հավաստվում է, որ կցված տեքստը 2005 թվականի դեկտեմբերի 6-ին ստորագրված Մտավոր սեփականության իրավունքների՝ առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագիրը փոփոխող արձանագրության հայերեն պաշտոնական թարգմանությունն է:



**Հայաստանի Հանրապետության
արտաքին գործերի նախարարություն**